## ԹԻՎ 31 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**«06» ապրիլի 2025թ.**
**ք. Գյումրի**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18-Ա

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025 թվականի մարտի 30-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում տեղի են ունեցել ավագանու արտահերթ ընտրություններ:

2025 թվականի մարտի 31-ին թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով թվով 82 տեղամասային ընտրական հանձնաժողովների քվեարկության արդյունքների արձանագրությունները, ամփոփել է Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները և արձանագրությունով վավերացրել:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 74-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է արձանագրություն՝ համայնքում քվեարկության արդյունքների վերաբերյալ:»:

2025 թվականի ապրիլի 1-ին, ժամը 11:00-ին հրավիրված նիստում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով իրականացված վիճակահանությամբ թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ընտրել է երեք ընտրական տեղամաս՝ թիվ 31/78, 31/22, 31/66, որոնց քվեարկության արդյունքները վերահաշվարկել է: Միաժամանակ, նույն նիստում թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ընդունել է մի շարք ընտրական տեղամասերում սեփական նախաձեռնությամբ վերահաշվարկ կատարելու մասին 2025 թվականի ապրիլի 1-ի N 16-Ա որոշումը, որի համաձայն՝ վերահաշվարկել է թիվ 31/67, 31/70, 31/50, 31/41 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները: Տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի որևէ դիմում թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում չի ստացվել:

Թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից իրականացվել է ընդհանուր թվով 7 ընտրական տեղամասերի քվեարկության արդյուքների վերահաշվարկ, որի արդյունքում տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից արձանագրված կողմ քվեարկած քվեարթերթիկների և անվավեր քվեաթերթիկների թվերը փոփոխվել են հետևյալ համամասնությամբ՝

1) Հայաստանի կոմունիստական կուսակցությանը և «Մեր քաղաքը» կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկած քվեաթերթիկների թվերը մնացել են անփոփոխ,

2) «Ապրելու երկիր» կուսակցությանը, «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությանը, Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցությանը, «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկած քվեաթերթիկների թվերն ավելացել է 1-ով,

3) «Եվրադաշինք» կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվն ավելացել է 2-ով,

4) «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը և «Իմ հզոր համայնք» կուսակցությանը կողմ քվեարկած քվեաթերթիկների թվերն ավելացել է 5-ով:

Վերահաշվարկի արդյունքում անվավեր քվեաթերթիկների թիվը նվազել է 15–ով, իսկ անճշտությունների չափը՝ 876-ով:

Թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ վերահաշվարկի արդյունքում ընտրությունների արդյունքներում որևէ էական փոփոխություններ չեն կատարվել:

Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների և վերահաշվարկի արդյունքների հաշվառմամբ՝ թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 6-ին կազմել է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ:

2025 թվականի մարտի 30-ին տեղի ունեցած Հայաստանի Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում չի ներկայացվել:

2025 թվականի մարտի 30-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվել է թվով 7 դիմումներ, որոնց ուսումնասիրությամբ թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, ըստ անհրաժեշտության, ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 8-րդ մասով՝ օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ձեռնարկել է համապատասխան միջոցներ և իրազեկել դիմումատուներին:

Թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է 2025 թվականի մարտի 30-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 2025 թվականի մարտի 30-ին արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները և 2025թ. ապրիլի 4-ին ընդունել է թիվ 17-Ա որոշումը, ըստ որի՝ արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականներն ընտրությունների արդյունքների վրա որևէ ազդեցություն չեն ունեցել:

Թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 4-ի թիվ 34-Ա որոշումը, որով հրապարակվել են՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի

մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ եզրակացությունը (այսուհետ՝ Եզրակացություն):

Եզրակացությամբ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն արձանագրել է. «Մշտադիտարկման ցուցանիշներից ակնառու է, որ առկա է առանձին տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամի որոշակի անհամաչափություն:»: Միաժամանակ, Եզրակացության ամփոփիչ մասում նշվել է, որ «Հանձնաժողովը տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների կողմից 2025 թվականի մարտի 15-ից 28-ն ընկած ժամանակահատվածում տրամադրած և կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից օգտագործված եթերաժամի արձանագրված անհամաչափությունը՝ որպես տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների կողմից նախընտրական քարոզարշավին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններ ապահովելու խախտում, չի գնահատում:»:

Թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության 04.04.2025թ. եզրակացությունը՝ Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի մարտի 30-ի համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների մասին, որում վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը փաստել է, որ բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով համայնքում քվեարկության արդյունքների արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընդունած որոշումը, ամփոփում է համայնքում քվեարկության արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների արդյունքների վերաբերյալ:»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով՝ թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է.

2025 թվականի մարտի 30-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել Ընտրական օրենսգրքի խախտումներ, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա:

**Թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ** **Տ.Ղազարյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՀՀ N31